



այլ, ընդհակառակը, Ամանորի այդ օրերին տրվում են բազմատեսակ ուտեստների ու խմիչքների վայելքին, ինչպես, փաստորեն, ամբողջ աշխարհում: Պահքի շրջանն ավարտվում է կեզգիշերային պատարագով և հասնում գագաթնակետին ընտանեկան հարկի տակ՝ ճոխ սեղաններով: Եկեղեցականները օրհնված սուրբ ջրից բաժին են հանում հավատացյալներին՝ որով մարդիկ մաքրում են տանը եղած առավել կարևոր իրերը:

Պատմական Հայաստանում հարազատներն ու ընկերներն այցելում էին մեկնելու տուն և ողջունում միմյանց: Այս սովորույթը գնալով տարածվում է է նաև այսօրվա Հայաստանում, թեև դեռևս ավելի մեծ աշխուժություն է տիրում Նոր Տարվա առաջին օրերին:

Սուրբ Ծննդյան օրը հայերը միմյանց ողջունում են հետևյալ խոսքերով. «Քրիստոս ծնավ և հայտնեցավ, ձեզ և մեզ մեծ ավետիս», «Օրհնյալ է հայտնությունն Քրիստոսի»: ○

Year holidays that Armenians started to celebrate in the 18th century). The period of fasting ends with the mass at midnight and it culminates in a great feast in the family circle. Priests give out holy water, which is used in the households to clean important things in the house.

In historical Armenia, friends and relatives would visit each other's homes and greet one another. This tradition is becoming more and more popular in today's Armenia as well, though there is still more motion on the first days of the New Year holiday.

On Christmas day, people use the following expressions while greeting each other:

*Kristos tsnav yev haytnetsav* (Christ is born and revealed among us),

*Dzez yev mez mets avetis* (To you and us the good news)

*Orhnyal eh haytnootyoonun Kristosi* (Blessed is the revelation of Christ). ○

## Սուրբ Ծնունդը Վրաստանում

Դաթա Պարուլավա,  
Միրիան Բազալի, ԱՈՒԿ 4



Սուրբ Ծնունդը Վրաստանում, ինչպես և ողջ քրիստոնյա աշխարհում, կարևորագույն տոնն է: Պարզապես, քանի որ Վրացիները դավանում են ուղղափառ եկեղեցուն, որոշակի տարբերություններ կան՝ համեմատած ԱՄՆ-ի և Եվրոպայի հետ: Վրաստանում մենք Սուրբ Ծնունդը տոնում ենք հունվարի 7-ին (ըստ հուլիանոսյան օրացույցի): Վրացիները սովորաբար տոնը նշում են տանը՝ ընտանիքի անդամների շրջանում, իսկ գիշերվա Ժ. 1-ից հետո այցելում են հարազատներին ու ընկերներին՝ շնորհավորելու նրանց: Մեզ մոտ՝ Վրաստանում, մեծ ուշադրություն է դարձվում Սուրբ Ծննդյան տոնական սեղանին, որի առավել կարևոր բաղադրիչը (անշուշտ՝ գինուց հետո) հնդկահավն է: Սուրբ Ծնունդը վրացիները դիմավորում են «Ալիլո» և «Մրավալձամիեր» երգերով: Առհասարակ երգը վրացական տոնական սեղանների անբաժան ուղեկիցն է:

Վրաստանում առանց գինու ոչ մի տոն չի նշվում. Սուրբ Ծնունդը նույնպես բացառություն չէ: Գինին վրացական «սուփրայի» կարևորագույն տարրն է: Վրաստանի տարբեր շրջաններում Ծննդյան տոները տարբեր կերպ են նշվում: Հին ավանդության համաձայն, շատերը գնում են ալիլոյի՝ զանգվածային զբոսանքների՝ կրելով հատուկ հանդերձանք և միմյանց շնորհավորելով: Ալիլոյին հաճախ մասնակցում են մեծ թվով երեխաներ, որոնք քաղցրավենիք են ստանում մեծերից:

Ալիլոյի երգերը տարբեր են Վրաստանի տարբեր գավառներում: Առավել հաճախակի հնչում են հետևյալ տողերը՝ «Օգդախուցա դեկեմբերսա Քրիստե իշվա Բեթլեմսա», այսինքն՝ «Դեկտեմբերի 25-ին Քրիստոս ծնվեց Բեթլեհեմում»:

Ինչպես և Սուրբ Ծնունդը, Նոր Տարին նույնպես շատ սիրված տոն է Վրաստանում: Այն նույնպես տոնվում է գինու և երգերի ուղեկցությամբ: Մենք հետևում ենք «մեկվլեի» ավանդույթին, այսինքն՝ կեզգիշերից հետո այցելում ենք ազգականներին ու մոտ ընկերներին: Մեկի տուն մտնելիս դու պետք է ձեռքունդ քաղցրավենիք ունենաս և, արտասանելով հետևյալ բառերը՝ «Շենվոդգի փեխի, գփարավդեթ դմերթի», («Ես ներս եկա, Աստված օրհնի ձեզ»), պետք է քաղցրավենիքը մետես դեպի ներս: «Մեկվլեն» այն անձն է, որը կեզգիշերից հետո առաջինն է այցելում տվյալ ընտանիքին: Վրացիները հավատում են, որ նոր տարում հաջողությունը կախված է

## Christmas in Georgia

By Datha PARULAVA and  
Mirian BAZALI, ATC 5

Christmas in Georgia is the main holiday, as well as in the Christian world overall. In the West, people celebrate Christmas on December 25th. Armenians celebrate on January 6th, in accordance with the canons of the Armenian Apostolic Church. But since Georgia is an Orthodox country, Georgians celebrate Christmas on January 7th (by Julian calendar). Usually celebrations take place at home, together with the family members, and after 1 o'clock people visit their relatives and friends to congratulate and celebrate together.

We, Georgians, consider the Christmas 'supra' (table) very important. Turkey is probably the most important component (of course, after wine). We meet Christmas with the song 'Alilo' and 'Mravaljamier'. Songs are a major part of the Georgian feast. In Georgia, no single holiday is celebrated without wine, and Christmas is not an exception. Wine is the most important element of the Georgian 'supra'.



There are different traditions in celebrating Christmas in different regions of the country.

Traditionally, people go on *Alilo*, a mass walking in streets, dressed in special forms to celebrate and congratulate each other. Children often participate in *Alilo* and are gifted with sweets from elders. The *Alilo* songs vary in different Georgian provinces. In most songs, these words are used: "otsdakhutsa dekembersa qriste ishva betlemsao" meaning "On December 25th, Christ was born in Bethlehem."

The New Year, as well as Christmas, is very popular in Georgia. It is celebrated with wine and songs. There is a tradition of 'Mekvleh', which means visiting close friends and relatives

Մեկվլեից:

Վրացական ամանորյա սեղանը շատ հարուստ է ազգային խոհանոցի զանազան ուտեստներով: Ավանդական ուտեստներից են սածիլին (հնդկահավի միսը ընկույզի սոուսում), գոզինակղին (մեղրով տապակած ընկույզ), խաչապուրին, չուրչ-խելան (հայկական տարբերակը սուջուխն է) և այլն: Եվ դարձյալ՝ ինչ տոնական սեղան առանց գինու:



Նոր Տարին նշանավորում է ամեն նորը: Այն նախ և առաջ նոր հույս է, հույս՝ ապագայի հետ կապված: Իսկ Սուրբ Ծնունդն այն օրն է, երբ նոր հույս է ծնվում բոլոր քրիստոնյաների սրտերում, անկախ այն բանից, թե կոնկրետ որ օրն է ընտրված այն տոնելու համար: ○

after the midnight. When you step over the threshold of your host's home, you should have some sweets with you to deliver and say the following words: *shemovdgi phekhi, gparavdet ghhmerti* – I came in, God bless you, then you should throw your sweets in. Mekvleh is the person who first enters somebody's home after the midnight. Georgians believe that their family's fortune in the coming year depends on Mekvleh.

The New Year table in Georgia is very rich with a large variety of the Georgian cuisine. Traditional dishes are: Satsivi (turkey in nut sauce), Gozinakghi (nuts fried with honey), Khatchapuri, Churchkhela (the Armenian version is Soojookh) and many others. And again, no celebration without wine.



The New Year first of all means a new hope for future. And Christmas is the day when the new hope is born in the hearts of Christians throughout the world, regardless what day has been chosen by different Christian nations to celebrate. ○

## Մեր հանապազօրյա հացը

Մերի ենոքյան, ԱՈՒԿ 5



Համաշխարհային տնտեսագիտությունից առաջին կիսամյակի իմ վերջին կուրսային աշխատանքը վերաբերում էր հացին: Ես որոշեցի տոնական այս օրերին կուրսայինում արտահայտած իմ որոշ մտքեր փոխանցել նաև մեր տեղեկագրի ընթերցողներին՝ ևս մեկ անգամ այս ֆիզիկական և հոգևոր արժեք ունեցող մթերքի կարևորության մասին հիշեցնելու համար: Ցավոք սրտի, կան մարդիկ, ովքեր առանձնապես լավ չեն հասկանում, թե ինչու է անհրաժեշտ խնայել հացը: Էլ ավելի մտահոգիչ է այն հանգամանքը, որ նույնիսկ կան մարդիկ, որ հացը նետում են աղբարկղ: Ցավ էս զգում այն բոլոր լավ մարդկանց փոխարեն, ովքեր ցանում, մշակում, աճեցնում, հավաքում, աղում են են ցորենը և հաց են թխում (մենք՝ հայերս, հաճախ ասում ենք՝ «հաց են արարում»):

Հացը օրինյալ մթերք է բոլոր ազգերի համար՝ սկսած վաղնջական ժամանակներից: Թանկագին հյուրերին դիմավորում են աղ ու հացով՝ որպես հարգանքի ու մեծարանքի նշան: Եթե դու մեկի ընտանիքում հաց ես կտրում, ապա նշանակում է հարգանքի տուրք ես մատուցում քեզ հյուրընկալողին:

Իսկ հիմա, որպես ագրոբիզնեսի և շուկայաբանության ոլորտի ուսանող, կուզեմայի արտահայտել որոշ մտքեր այն մասին, թե ինչու պետք է խնայել հացը: Անցյալում հացը եղել է ամենաթանկ ապրանքներից մեկը: Հիմնական պատճառները եղել են հետևյալները. 1) երաշտ, 2) հորդառատ աձրևների պատճառով ավելորդ խոնավություն, 3) ցորենի հիվանդություններ և վնասատուներ, 4) Հեղեղներ, 5) Պատերազմներ, որոնց ժամանակ ոչ ոքի չի հետաքրքրում բերքահավաքը, 6) եղանակի կտրուկ փոփոխություններ, քամիներ,



## Our Daily Bread

By Mary Yenokyan, ATC 5

My last course paper in World Economics in the first semester was about bread. I decided to share some of my ideas with the readers of our newsletter during these holiday season just to remind one more time the significance of this vital physical and spiritual product. Unfortunately there are people who don't quite understand why we should care about saving bread. And even more regrettably, you can see people who throw away bread into the dump. You feel pain for all those good people who do so much hard work seeding, growing, harvesting, grinding the wheat and baking bread (we, Armenians, often say 'creating bread').

Bread is a blessed product for all nations from ancient times. An old tradition like meeting dignitaries and important guests incorporates serving bread and salt as a sign of respect. Another good example is that when you share bread in a family, it is a sign of respect to your host.

And now, I would like to share a concept about why bread should be saved from the perspective of an agribusiness and marketing student. In the

past, bread was one of the most expensive products. The main reasons for this were the following:

- 1) There was draught in a particular year, wheat fields were not irrigated, and the whole yield or a significant part of it 'burned' under sun.
- 2) Just the opposite situation also was true, when, because of heavy rains, excess moisture spoiled the yield.
- 3) Pests and diseases could be another major problem creating shortage of bread.
- 4) Flood took away the entire yield.

կարկտահարություն և այլն: Այս ամենը բնականաբար անցյալում բերել է, ներկայումս էլ բերում է հացի գնի աճի:

Յուրաքանչյուր պետություն պետք է իր ժողովրդի համար պահանջարկի ցորենի և ալյուրի բավարար պաշարներ, որպեսզի կարողանա դիմակայել բնական և տեխնածին աղետների ժամանակ առաջացող հնարավոր դժվարություններին: Այս կերպ հնարավոր կլինի հացի գները կայուն պահել և ցորենի բավարար պաշարներ ունենալ: Մյուս կողմից, երբեմն սպառողական գները կարող են նվազել՝ արտադրողներին պարտադրելով տնտեսական ճգնաժամ: Ահա թե ինչու կառավարությունները պետք է նպաստավոր պայմաններ ստեղծեն ֆերմերների համար, որպեսզի ավելանան վերջիններիս եկամուտները, որը, սակայն, անհրաժեշտ է համատեղել ազգային առաջնահերթ խնդիրների լուծման հետ:

Ցորենը ռազմավարական կարևորություն ունեցող պարանք է որևէ երկրի համար, իսկ հացի գների կայունությունը տվյալ երկրի ընդհանուր կայունության և զարգացածության բարձր մակարդակի երաշխիքն է: ○

5) During war time, nobody cared about harvesting wheat, and hence - again deficiency and increase in price.

6) Abrupt changes in weather, winds, hail damage; farmers could not save the harvest, etc.

All this naturally has always caused and still causes increase in bread prices in many countries.

Every nation should be able to provide enough stocks of wheat and flour in order to be able to face difficulties during natural and man-caused disasters. This way it will be possible to keep the prices stable and help its people with wheat resources. On the other hand, sometimes consumer prices may drop down thus causing economic crisis for producers. The governments then should provide favorable conditions for farmers to increase their incomes combining this, however, with the national priorities.

Wheat is a strategically important commodity for any nation and stable bread prices are a notion of overall stability and high level of development of a country. ○

## Խաղաղություն ձեր փոքրիկ հոգիներին

Անի ԶԱՔԱՐՅԱՆ, ԱՈՒԿ 5



Ամանորն արդեն վաղուց ինձ չի հուզում որպես Ձմեռ Պապից նվերներ ստանալու հնարավորություն ընձեռող տոն: Ժամանակ առ ժամանակ, Նոր Տարվա ծրագրերի ու երազանքների մեջ մարդուն տանջում են կարիքի մեջ գտնվող հազարավոր մարդկանց մասին մտքերը: Մանկատներում ապրող երեխաները զրկվելու են ջերմ ընտանեկան մթնոլորտից ևս մեկ օրով, մեկ շաբաթով, մեկ ամսով, մեկ տարով... Որպես հասարակության մի մաս, մենք ի՞նչ կարող ենք անել, որ մնա այս եակների մանկական թանկ հիշողությունների մեջ, գոնե դուրյզն ինչ փարատի թախիծն ու մռայլությունն իրենց աչքերից:

Դեկտեմբերի 18-ին, Ծիծեռնակ ոչ կառավարական կազմակերպության, Երևանի տիկնիկային թատրոնի երիտասարդ դերասանների ու Միջազգային հետազոտությունների և փոխանակման խորհրդի (IREX) նախաձեռնությամբ, կազմակերպվեց այցելություն Նուբարաշենի մտավոր հետամնաց երեխաների թիվ 11 դպրոց: Դպրոցի երեխաները հաճույքով ունկնդրեցին երիտասարդ դերասանների կատարմամբ Յովհաննես Թումանյանի հեքիաթների բեմականացումը:

ԱՈՒԿ-ի գործարար ակումբն էլ իր մասնակցությունն ունեցավ միջոցառմանը: Մեկ շաբաթվա ընթացքում դպրոցի երեխաների համար մենք կոնֆետներ էինք հավաքել՝ դրա համար նախատեսված տուփը դնելով ԱՈՒԿ-ի ամանորյա տոնածառի տակ: Սոս 7 կգ համեղ կոնֆետներ հավաքեցինք: Մենք մեր ամբողջ «բերքահավաքը» տեղավորեցինք ամանորյա տոպրակներում և միջոցառման ժամանակ բաժանեցինք դպրոցի երեխաներին: ԱՈՒԿ-ում քննությունների լարված շրջանն էր, այդ իսկ պատճառով ԱՈՒԿ-ի ուսանողներից միայն ես կարողացա մասնակցել դպրոցում կազմակերպված միջոցառմանը: Սակայն իմ դասընկերները պատրաստակամությամբ հայտնեցին հաջորդ կիսամյակին անպայման մասնակցել համայնքային մի շաբթ ծրագրերի:

Ես շնորհավորում եմ մանկատների բոլոր երեխաներին՝ Նոր Տարվա և Սուրբ Ծննդյան առիթով: Սիրելի երեխաներ, հուսով եմ, մեր այս ոչ մեծ գործակցությամբ կարողանում ենք մի քիչ շափտ պարզել ձեր անմեղ դեմքերին և խաղաղություն բերել ձեր փոքրիկ հոգիներին:

## Smile in Your Faces and Peace to your souls

By Ani ZAKARYAN, ATC 5

New Year Holidays have long halted to excite me as a consequent occasion for getting Christmas gifts from the Father Frost. Among new plans and dreams for the upcoming year, anguish thoughts about thousands of human beings in need torment you once in a while. Children in orphanages are to be deprived of a warm family atmosphere for another day, week, month, year... What can we, as a part of a society, do to shape the precious childhood memories of these creatures, to somehow alleviate the dim sadness in their eyes?



On the 18<sup>th</sup> of December, 2006, by the initiative of Tsitsernak NGO, the young artists of Yerevan Puppet Theater and International Research and Exchange Board (IREX), a visit was organized to Noubarashen School #11 for mentally retarded children. The children of the school were excited to enjoy a few tales of famous Armenian writer Hovhannes Toumanyan performed by the young artists of the theater. ATC Business Club on its behalf volunteered to organize a candy drive for the children. During a week of having a candy box under the ATC Christmas Tree, we were able to raise some 7kg of delectable candies. We accurately allocated our 'harvest' in Christmas bags, which were later presented to the children of the school. Because of the tough examination period, I was the only ATC student who could join the event at the school. However, as expressed by my fellow students, they are very much willing to get engaged in various community service projects during the next semester.

Happy New Year to all of the orphanage kids! We hope that our small interactions are able to attach a piece of smile to your faces and bring peace to your inner world.

## ICARE փոխտնօրենը կոոպերատիվների դաշնության հայեցակարգ է ներկայացնում

Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն (ICARE) հիմնադրամի փոխտնօրեն Վարդան Ուռուտյանը մասնակցեց Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնի կազմակերպած կաթ արտադրողների սպառողական կոոպերատիվների տարեկան հերթական խորհրդաժողովին: Դոկ. Ուռուտյանի՝ «Գյուղատնտեսական կոոպերատիվների, դաշնությունների և միությունների անհրաժեշտությունը, դրանց զարգացման միջազգային և տեղական փորձի ուսումնասիրությունը» վերտառությամբ զեկուցումը ներառում էր կոոպերատիվների զարգացման նախադրյալները, դրանց ստեղծման և գործելակերպի սկզբունքները, անդամների, տնօրենների խորհրդի և գործադիր տնօրենի պարտականությունները: Զեկուցողը նաև ներկայացրեց ոլորտի ամերիկյան, շվեդական և ռուսական փորձը, իսկ հայաստանյան փորձը ներկայացրեց Գյուղատնտեսական ասոցիացիաների ֆեդերացիայի (ԳԱՖ) օրինակով: Ի դեպ, արդյունավետ գործակցություն է ծավալվել ԳԱՖ-ի և Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի հետազոտական խմբի միջև:



Դոկ. Ուռուտյանի զեկուցումն աշխույժ քննարկումների տեղիք տվեց տարբեր մարզերից եկած կոոպերատիվների անդամ ֆերմերների, մասնագետների և ոլորտի պատասխանատուների միջև՝ դրանով իսկ նպաստելով ԱԳԶԿ-ի տեխնիկական աջակցության ոլորտում գտնվող կաթի սպառողական կոոպերատիվների դաշնությունը ստեղծելու մտադրությանը: ○

## ICARE Deputy Director Providing a Concept of Federation of Cooperatives

Vardan Urutyanyan, Deputy Director of ICARE Foundation, participated in the traditional Annual Dairy Cooperative Conference organized by the Center for Agribusiness and Rural Development (CARD). Dr. Urutyanyan's report on "Assessment of the necessity and local and international experience of development of agricultural cooperatives, federations, and associations" included prerequisites of cooperative development, principles of cooperative building, responsibilities of members, boards, and executive directors of cooperatives. Dr. Urutyanyan presented also the U.S., Swedish, and Russian experiences in the field as well as the experience of the Federation of Agricultural Associations (FAA). By the way, there is a successful collaboration between the FAA and the ATC Research Group.

The report induced a lively discussion among dairy cooperative member-farmers and specialists from different regions of Armenia as well as representatives of agricultural authorities, thus supporting CARD's intention to establish a federation of milk marketing cooperatives under its technical assistance.



## ԱՌԿ-ի ուսանողներն օգնեցին կազմակերպելու գինու և պանրի համեսն ԱՄՆ դեսպանատանը

Սոնա ԲԱԲԱՅԱՆՑ, ԱՌԿ 5



ԱՌԿ-ի ավելի քան տասն ուսանողներ օգնեցին Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոնին՝ կազմակերպելու Հայաստանում ԱՄՆ դեսպանությունում տեղի ունեցող ավանդական տարեվերջյան գինու և պանրի համեսնը: Համեսնատած անցյալ տարվա հետ (մեզանից ոմանք մասնակցել են նաև անցյալ տարվա համանման միջոցառմանը), այս տարի մասնակցող ընկերությունների թվի աճ չէր: Փոխարենը, զգալիորեն ավելացել էր հայաստանյան արտադրության արտադրատեսակների թիվը՝ ներառելով եվրոպական նոր պանրատեսակներ, ինչպիսիք են մոցարելան, էդամը, կամամբերը և այժի ու ոչխարի տեղական նոր պանրատեսակներ, ինչպես նաև նոր գինիներ, որոնք նույնպես, ինչպես և պանրի տեսականին, լավ ընդունվեցին մոտ 200 այցելուներից (հատկապես Գետնատուն գործարանի արտադրանքը):

## ATC Students Helped Organize Wine and Cheese Tasting Event at the US Embassy

By Sona BABAYANTS

A dozen of ATC students helped the Center for Agribusiness and Rural Development (CARD) in the traditional yearend wine and cheese tasting event at the US Embassy in Yerevan. There was no increase in the number of businesses participating compared with the last year's similar event (part of us attended also last year); instead, the number of locally produced products had noticeably increased to include some new European type cheeses like Mozzarella, Edam, Camembert and local goat and sheep cheeses as well as several new wines (especially those produced by Getnaton Winery) that were well accepted by about 200 visitors.

Another difference of this year's event was that in addition to wines and cheeses, CARD presented also some other products: natural juices from Noyan and Yan companies and chocolates from Arcolad company. We served juices and chocolates with no less enthusiasm than wines and cheeses: everything was so tasty and nicely packaged.

But it was not only the quality and taste of the products that

Այս տարվա միջոցառումը նախորդից տարբերվում էր նաև այն բանով, որ բացի գինիներից ու պանիրներից, ԱԳԶԿ-ն որոշել էր ներկայացնել նաև այլ մթերքներ՝ Նոյան և Յան ընկերությունների բնական հյութերը և Արկոլադ ընկերության շոկոլադները: Մենք ոչ պակաս խանդավառությամբ մատուցեցինք նաև այս մթերքները. ամեն ինչ այնքան համեղ էր և գեղեցիկ կերպով փաթեթավորված:

Սակայն ոչ միայն մթերքների որակն ու համային հատկանիշներն էին, որ գոհունակություն էին պատճառում այցելուներին, այլև մեր մատուցման ձևն ու մակարդակը. այս հարցում, անշուշտ, մենք օգտագործում ենք ԱՈՒԿ-ում ստացած թե մասնագիտական գիտելիքները և թե հաղորդակցական հմտությունները: ԱԳԶԿ-ի ղեկավարությունը և դեսպանության աշխատակիցները նույնպես գոհ մնացին մեր աշխատանքից: Դեսպանության աշխատակից պրն Պատրիցիո Լոպեսը մեզ հրավիրեց հաջորդ շաբաթ դեսպանությունում կազմակերպվող ընդունելությանը, որը մենք հաճույքով ընդունեցինք: ○

pleased the visitors; it was also the way and the level that we presented and served the products using our special, ATC-type, professional and communication skills. The CARD management and the US Embassy staff members were also very pleased with our performance. Mr. Patricio Lopez of the Embassy kindly invited us to an Embassy party next week, which we accepted with pleasure.



## Christmas at ATC



Agribusiness Teaching Center, International Center for Agribusiness Research and Education Foundation  
 74 Teryan St., Yerevan, Armenia  
 In association with USDA FAS, Texas A&M University, and the State Agrarian University of Armenia  
 Tel: (37410) 52-28-39, 56-95-70; Fax: (37410) 56-62-21 E-mail: sos\_avetisyan@yahoo.com  
 Հ. ՌԱՄՇԵՅՔԻ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ 74